ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 101

ք. Երևան 02.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ի (ՀՎՀՀ 66933595; գործունեության հասցե՝ ՀՀ, ԼՄ, ք.Վանաձոր, Դպրոցի փ. 26) միջև 18.07.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-22/8-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ն 2023թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր ընդհանուր 1000 հատ Պաշտպանիչ հատուկ ակնոցներ (պաշտպանիչ ակնոցներ): Սակայն, «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ն վերոհիշյալ ապրանքները մատակարարել է 13.11.2023թ.-ին, որոնք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հաշվի առնելով, որ «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Արեն Էվոյան Մեսրոպի» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ